գողացեալ և յափշտակեալ զամենայն զոր ինչ այլոց ըստ Օրինաց մերոց յետս դարձուցանի Տեառն իւրոյ, անձն իւր միայն փրկեսցի 'ի պատժոյ դատաստանի և յինքն մնայ նախատանաց։

ԳԼՈՒԽ ՅԻԸ.

Վասն բանակի մերոյ 'ի դաշտի պարտ է 'ի տեղի ոտաց ճանապարհ իւր բրեսցի խոր, խորութեամբ իբր մի գիրկ, և կամ քսան և չորս ուղուկ և միջոց հնգետասան աւուր լցցի հողով և բանասցի այլ իմ հոր 'ի այլ իմ կողմ վրանի իւրոյ զի գառաշահոտութիւն ազատեղեաց մի ՁԼասեսցի զօրաց, և 'ի միջոց ամենայն հնգետասան աւուր ամենայն վրան հաւաքեսցի աղբ անասնոց իւրոյ և 'ի հրով այրեսցի։

ԳԼՈՒԽ. ՅԻԹ.

'Ի դաշտս երեսս երկրի որում խաղայ բանակս մեր ոչ ոք դաշտի մի նստցի 'ի յաւելի քանթէ քառասուն աւուրս, եթէ չիցէ վասն շրջապատութեան տեղեաց և ամրոցաց թշնամեաց մերոց, թէ ոչ խաղասցի 'ի տեղիս վասն մնալոյ յօթն և երկիր յատակ վասն առողջութեան արանց բանակին մերոյ։

ԳԼՈՒԽ ՅԼ.

'Ի ժամանակի պատերազմի որում դաշտի